ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

ելից N55
29.06.2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Մեծավան համայնքի ղեկավարի թիվ 51-55 որոշումները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, , metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2017 թվականի N 51-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ՄԵԼԻՔ ԱՐԹՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Մեծավան համայնքի անչափահաս բնակիչ Մելիք Արթուրի Մարկոսյանի հայրը՝ Արթուր Մելիքի Մարկոսյանը մահացել է 2017թվականի ապրիլի 13-ին, իսկ մայրը՝ Անգին Սուրենի Մանգասարյանը մահացել է 2015թվականի սեպտեմբերի 21-ին և այժմ անչափահաս Մելիք Մարկոսյանի խնամքով ու դաստիարակությամբ զբաղվում է նրա քույրը՝ Լուսինե Արթուրի Մարկոսյանը, հիմք ընդունելով համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի դրական եզրակացությունը, ղեկավարվելով «ՀՀ ընտանեկան օրենսգրքի» 134. հոդվածով և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 22-ի թիվ 164-Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71. հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լուսինե Արթուրի Մարկոսյանին նշանակել խնամակալ Մելիք Արթուրի Մարկոսյանի նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. հունիսի 20
գ.Մեծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2017 թվականի N 52-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N36-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Մեծավան համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 18-ի N36-Ա որոշմամբ հաստատված Մեծավան համայնքի ներքին աուդիտի կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Մեծավան համայնքի ղեկավարի 2017 թվականի ապրիլի 18-ի N36-Ա որոշմամբ հաստատված Մեծավան համայնքի ներքին աուդիտի կանոնակարգի 37-րդ կետը վերաշարադրել հետևյալ կերպ՝

37. Համայնքապետարանի ներքին աուդիտի միջավայր են հանդիսանում՝

- Համայնքապետարանի աշխատակազմը և նրանց կողմից իրականացվող համայնքապետարանի բոլոր գործառույթները
- համայնքապետարանի ենթակայությամբ գործող թվով երկու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (<<Զանգակ մանկապարտեզ>> ՀՈԱԿ և <<Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ), որոնք իրականացնում են նախադպրոցական և մշակութային գործառույթներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017թ. Հունիսի 20
գ. Մեծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2017թվականի N 53-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Լոռու մարզի Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Շողիկ Միշոյի Ազոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տալ հասցե՝ Խաչատրյան փողոց N25:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

20 17 թ. հունիսի 21

գ.Մեծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, , metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2017 թվականի N 54-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ՔԵՐՈԲԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Մեծավան համայնքի անչափահաս բնակիչ Արթուր Քերոբի Ռաֆայելյանի հայրը՝ Քերոբ Սերոբի Ռաֆայելյանը և մայրը՝ Անժելա Վաչիկի Ռաֆայելյանը բնակվում են ՌԴ-ում և այժմ անչափահաս Ա.Ռաֆայելյանի խնամքով ու դաստիարակությամբ զբաղվում է նրա տատը՝ Անախաս Արշակի Ռաֆայելանը,ելնելով անչափահաս Արթուր Քերոբի Ռաֆայելյանի շահերից, հիմք ընդունելով համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի դրական եզրակացությունը, ղեկավարվելով «ՀՀ ընտանեկան օրենսգրքի» 134. հոդվածով և ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 22-ի թիվ 164-Ն որոշմամբ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71. հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Անախաս Արշակի Ռաֆայելանին նշանակել խնամակալ Արթուր Քերոբի Ռաֆայելյանի նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. հունիսի 27
գ.Մեծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2017 թվականի N 55-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածով, հիմք ընդունելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հատկացված 0.04061հա հողամասում Հովհաննես Խաչատուրի Ազոյանը/մահ.2003թ./ և Շողիկ Միշոյի Ազոյանը Խաչատրյան N25 հասցեում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը առանց իրավահաստատող փաստաթղթերի կառուցել են բնակելի տուն և օժանդակ կառույցներ, որոնք չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն հաշվառվել որպես ինքնակամ կառույցներ, չեն առաջացնում սերվիտուտի հարկադրանք, չեն հակասում << ՀՀ հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածի պահանջներին, Հովհաննես Ազոյանի մահից հետո՝ համաձայն ժառանգության իրավունքի վկայագրի/տրված 26.06.2017թ./ ժառանգ է համարվում նրա կինը՝ Շողիկ Միշոյի Ազոյանը, հաշվի առնելով այդ հանգամանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լոռու մարզի Մեծավան համայնքի Խաչատրյան N25 հասցեում գտնվող Շողիկ Միշոյի Ազոյանին պատկանող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ կատարել հիմքերի վերականգնում:
2. Ճանաչել ներքոհիշյալ կառույցների նկատմամբ Շողիկ Միշոյի Ազոյանի սեփականության իրավունքը՝
   1) բնակելի տուն -70.19 ք.մ
   2) բնակելի տուն -74.26ք..մ
   3) բաց պատշգամբ– 10.27ք.մ
   4) անասնագոմ -9.60ք.մ
3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ**